

ԶԱՐԵՐԻ

894.342  
2-24





-6 NOV 2011

894.342  
2-24

# ԶԱՄԲՈՒԼ

Ղայուսակ ժողովրդական Յերահը<sup>1</sup>  
Պատմական

ՅԵՐԱՀ  
ՊՈԵՄԱՆԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՂԱՅՈՒՍԱԿ ԳԱՐԱԶՈՒՆ  
ՅԵՐԱՀ  
1938



23.07.2013

73.570



3320

38

## ԱԿԻՆԻ ԿՑԱՆՔԸ

ԴԱՄԲՈՒՆԻ ԽՆՔԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ





Գույք հարցնում եք, թե վո՞րտեղացի յևմ  
յիս:

Յերե Զու գետից գնանք դեպի տափաստա-  
նը՝ յերկու սար կտեսնենք՝ Խանը և Զամ-  
բուլը։ Հայրս՝ Զարայը բոչ եր գնում այդ  
սարը։

Զամբուլ սարի մոտ, ձան կատաղի բռ-  
քանի ժամանակ եմ ծնվել յես և իմ անունը  
դրել են այդ սարի հնամենի անունը՝ Զամ-  
բուլ։ Դա տեղի յե ունեցել 1846 թ. փե-  
տրվարին։

Հայրս՝ Զարայը պատառուուն արա հա-  
գած մի աղքատ բոչվոր դազախ եր։

Չորս բոլորը, ինչքան աչքդ կտրեր, ա-  
մայի տափաստաններ Եյին փոլած։ Ման-  
կուքյանս յես վոչ մի անգամ դաշտ չեմ  
տեսել, վոչ ել այգի ու առու։ տափաստանն  
եր իմ հայրեթիքը։ Իմ շրջապատում չեղած  
բոլոր մարդիկն ել բոչվոր Եյին և սնվում  
Եյին անասւնով։

Մեր տափաստանները սահմանակից Եյին  
կիրգիզյան տափաստաններին։ Այդ ժամա-  
նակները դազախների ու կիրգիզների միջև  
քշամուքյուն կար։ Պատմում են, վար  
հայրս՝ Զարայը ամենախիզախ շիզիքներից  
(շիրիդավարներից) մեկն եր։

Մեծացել եմ քաղիքն վրանում և բռոր  
դազախ յերեխանների նման, յես ել մի որո-  
րոցով մի բոչից մյուսն եմ տարվել։ Ման-

կտկան տարիներիս ըմբուտ, քոկից փախած՝ յերեխս եյի: Զեյի ուզում լսել վաշ ծերերին, վոչ ել եռաւ. ինձ ուղարկում եյրն գոռներ արածացնելու, իսկ յես չեյի զնում. խնդրում եյին փայտ հալաքել, հրաժարվում եյի. ինձ համարում եյին չարանի ու շփացած:

Հորեղայրս հայտնի դոմբրիստ երև և յես. սիրում եյի ունկնդրել նրան: Տասներկու տարեկան հասակիս նրանից սպարեցի դոմբրա նվազել: Յերք այդ գործիքը ճեռս եր ընկնում՝ չարանիստություններս մոռանում եյի: Ինձ քվում եր, վոր վոչ քե դոմբրան և հնչում, այլ իմ ջահել սիրտը: Յես չեյի ուզում եռվիվ դասմալ և ինձ շոյում ճր դոմբրիստ ու յերգիչ լինելու եեռանկարը:

Թնությունն ինձ ուժեղ ու անսպառ ճայն եր տվել: Յերք բարձրաձայն յերգում եյր տափաստանում, ինձ քվում եր, վոր նամբողջովին լցվում ե իմ ճայնով:

Տասնչորս տարեկան հասակիս վճռեցի խղել հօրս հետ ունեցած կոսպերը և անկալի աղբել: «Որուշ-ի» (մահմեդական պահք) ժամանակ սկսեցի վրանից-վրան քափառել և քժարա-փազան» (ծիսական յերգ) յերգել: Յերգս դուր յեկավ և սկսեցին ինձ կերակուել ու նվերներ տալ: Դա ինձ ուրախացրեց: Յերք 15 տարիս լրացավ, զմացի այն առուր (զյուկը), ուր ապրում եր նշանավոր անուն Այույնումբայը: Խոմբրայովս նրա վրանին մոտենալով՝ սկսեցի «ժարա-փազան» յերգել: Այույնումբայն ուշաղրությամբ լսեց իմ յերգը, կանչեց իր վրանը և հարցրեց.

— Վո՞րուեղացի յես, վո՞ր ցեղից և վո՞ր տոհմից ես:

Հարգանքով պատասխանեցի նրան.

Զայվշե տոհմից եմ, Սադրեկ ցեղից.

Զարայների ընտանիքից:

Այույնումբայն ասաց.

— Ակին լինելու ընդունակություն ունեա, լավ ճայն ունես և շատ հաջող ես ընտրեք յերգիդ քառերը:

Այույնումբայի վրանում, ծեր Ակինի խրնությունով՝ յես հոգվելով բազմարիվ յերգեր յերգեցի: Մի յերգ ել ենց այդտեղ՝ վրանում եռրինեցի: Յերգեցի իմ ջահելուր; ոն անփորձության մասին, արտահայտեցի իմ եիացմունքը դեպի Այույնումբայի յերգերը, համեմատելով դրանք յերկնակամարք զարդարող արշալույսի ու վառ ասողի հետ և նրա փոքր յեղայրն անվանելով ինձ՝ ոգնություն ու պաշտպանություն խնդրեցի:

Այույնումբայը խոստացավ ինձ ոգնել ու սփրել: Իմ կյանքի ամենայերջանիկ ժամն եք դա: Ամբողջ գիշերը Այույնումբայը պատմում եր ակինի վարպետության դժվարության մասին: Այսպիսակ յես դարձա Այույնումբայի աշակերտը, վարն այդ ժամանուի 50 տարեկան եր: Պատահում եր, վոր Այույնումբայը զնում եր գյուղերը և ինձ ել եք վերցնում իր հետ: Յես ազահարար սպարում եյի: Այդ որվանից մինչև վերջերս, յերք յես դուրս եմ զալիս յերգելու, միշտ ել յերախտագիտության զգացմունքով և միշտ ուսուցչսի անունը: Այույնումբայի հետ շատ հաջո եյինք ապրում. յես յերգում եյի նրա հորինած յերգերը, և միայն տասնյաց տարեկան հասակիս վերաշեցի անկախութեն յերգել:

Սկսելով կմեմուրույն կերպակ յերգել՝ այնուամենայնիվ մեծանում ակինների մբրցությանը չեյի մասնակցում: Վարոշեցի մրցել միմիրայն ջահել, ֆիշ եայտնի ակինների հետ: Ղազախական տափաստաններում ընդունված երակինների մրցման մեջ պարտվելու մաս եր ակինի համար և բարմարիկ դեղուեր են յեղել, յերք պարտված ակինը քուրուվին դադարել և յերգել:

Յես քափառում եյի Զույի ափերին զոնքվող քոչերը և յերգում ժողովրդական տառասնկներ, հեքիաթներ, պատմներ, այլ ակինների գործեր և իմ սեփական յերգերը:

Դարավոր սպարություն եր դարձել, վոր Լանզատքասահց յերգող ակինը պարտավոր

Ե ամեն բան իմանալ.—քոլոր տոհմերմ ու ցւկերը, բոլոր ցեղապետմերին ու ամվաճի ուրդկսնց, բոլոր վայրերմ ու դեպքերը։ Նա պարտավոր եր արձագանքել բոլոր նորություններին և կարողանար կշռել գոյավիճակը։ Սրախոսություն և սրամություն, արագ ու սրամիտ պատախան տալու ունակություն—ահա թե ինչն ե գմանառվասմ ակների մեջ։ Բացի սրամից՝ նա պետք է ուսմարյուն լինի—ամենածանր ծաղրի յենքարկվելու դեպքումն ել ակինը պետք ե հանդարտ մնա։

Ենս այս բոլորն ել սովորեցի։ Հանդիպել եմ զագախական ու կիրգիզական տափառաւանների եկն ու հոչակավոր ակիններին—Ռուդին, Առստամբեկին, Ժանբային, Կաժմարերային, Սարգային, Ազերին և Բալուաչ—կուլակին։ Ուշադրությամբ լսել եմ նրանց, սովորել, ուժ կուտակել և պատրաստվել նրանց պես մեծ ակին դանակու։ Բայց ինձ դեռ անպատրաստ զգալով՝ մըրցման չելի մտմաւմ նրանց ենու։

Վարպետու ինքն չխավոր եյի, ապա լավ եյի հասկանում ապքատ ժողովրդին։ Ճշմարտանման կերպով յես կարող եյի յերգիլ միտյն իմ ու ժողովրդի մասին։ Յերբ ժողովրդի մասին եյի յերգում՝ յերգում եյի և իմ մասին։ Խոկ յերբ իմ մասին եյի յերգում, միաժամանակ և ժողովրդի մասին եյի յերգում։ Վողջ հօգովս հասկամալով, վոր ակինը չպետք ե կեղծի ու կեղծավորություն ամի։ յես սկսեցի սոսկ նշմարտությունը յերգե։

Ենվ իմ յերգերմ ազատ քոչումների նման սլացան վողջ Զերիսույցվ։

Մի վատ ձի հեծած յես գյուղից-գյուղ եյի գմում և վշտի ու քախծի յերգեր եյի յերգում, վորի համար ինձ կերակրում եյմ։

Շրջագայեցի վողջ Զերիսում, յեղա կիրակիսանում, գնացի կարականդա, քափառեցի արևելյան Ղազախստանում։

Ի՞նչ եյի յերգում—յերգում եյի իմ խեղն ու տանջված ժողովրդի, անարգված հայրենիքի և զազախական ցեղերի փառապանձ դյուցազների մասին։ Պատահում եր, վոր մի ժամի գիշեր շարունակ յերգում եյի և կունենոր եյի ստանում դրա համար։

Ինձ համախ վիճակվում եր մասնակցել յերկու տոհմերի ակին ներկայացուցիչների մըրցման։ Յես միշտ ել հաղթական եյի լինում և այն տոհմի ցեղապետը, վորի կողմից յես հանդես եյի գալիս՝ ինձ պարգևում եր խալար, վոչխար կամ ձիու քուուկ։

Շատ ցեղապետներ ինձ խնդրում եյին մնալ իրենց մոտ՝ խաստանալով յավ կերակրել, հարգիլ ու լավ նվերներ տալ, վարպետի յես փառարանեյի նրանց ու մասնակցեյի այլ ցեղերի ակինների հետ յեղած մըրցումներին։ Բայց յես չեյի ուզում կեղծավորություն անել ու կորվել ժողովրդից, չեյի ուզում գնալ դեպի ազաները։ Վնականապես հրաժարվում եյի ու նամապարհ շարունակում։

Մի մըրցման ժամանակ յես հաղթեցի մինչ այդ անպարտ Կուլմազամբերին և դարձա Զերիսույցի առաջին ակինը։

Հարունակեցի շրջագայել տափաստաններում և կերակրել յերգելուս համար սուսցածովս։ Կուլմազամբերի հաղթելուս լուրզ տարածեց բայր տափաստաններում և նույնիսկ անցալ Զերիսույցի սահմաններից։

Դրանից հետո յես մասնակցեցի ակիններին մեծ մըրցումներին ու պարտություն չտեսա։

Հազբեցի նշանավոր ակին Շաշարային, Կիրգիզատանի առաջին ակին Վալգույին, տաղանդավոր ու անընկնծելի Սարկրպին, անհաղթ Սա-Ասին և շատ ուրիշների։ Միայն մի պարտություն եմ նաշակել, բայց դա վոչ թե յերգի մըրցում եր, այլ քյույի (յերաժշտական գործիքով կտորներ)։ Ինձ հաղթեց յերգեր հարիմնել չիմացող, բայց հիանալիորեն դոմբրա նվագող կիրգիզ դոմբ-

րիսու Որազային: Իսկ յերգի ասպարիզու ժատ հեշտ կարող եյի հաղթել նրան:

Իմ յերգերը տարածվում եյին բոլոր տափաստաններում, և յես յերբեք չեյի խզուք իմ սերտ կապը ժողովրդի հետ: Բայերն ու մանափները վախենում եյին ինձմից:

Եերգը հսկայական ուժ և տափաստանում վոչ մի բանով նրա դեմք չես դնի, ինչպես դեմք չես դնի փոքրութիւն: Բայերն ու մանափները վախենում եյին, վոր իմ յերգերմեջ նրանց մասին վատ համբավ կտարածեմ և վող տափաստանն ինձ հետ դա կերպի:

Այսպես յես ապրեցի մինչև 55 տարի՝ քափառելով տափաստանում ու յերգերով:

Հիսութենագ տարեկան հաստկումն դրույյունս վատացավ: Եերությունից և վատապայմաններից՝ ծերացած արքայարձվի նրանման՝ հալից ընկա, աչքեր, և անգան ու ձայնս բռւղացավ:

Զեռչիս դոմբրայի տեղը բանեց ձեռնափայտը, իսկ լայնարձակ տափաստանի փնխարեն՝ նեղ անկողինը: Յես մարում եյի և անկարող, եյի լավ յերգեր յերգել: Յեկ միայն այն ժամանակ, յերք դապախներն ապբստամբեցին սպիտակ ցարի դեմ՝ յես միքանի յերգ յերգեցի և տափաստանը շարունակեց յերգել դրանք:

Յերք 70 տարիս լրացավ՝ տեսու նոր կյանքի արշալույսը: Հշմարտությունն աշխարենքալ բոլոր կենդանի եյակների համար: Յես լսեցի դյուցազն (բարիր) կենինի անունը և վկա յեղա Կարմիր Բանակի հազարկան յերբին: Կյանքը յեռաց իմ շուրջը, վորի մասին յես յերգում եյի իմ յերգերում, վորպես փոսկե յերազ:

Թարմ ուժերի հորդում զզացի և դոմբրան ճեսին առա: Զահելությունս վերադասիք ու յես յերգեցի:

Յերք նայեցի չորս կողմեր՝ չնամաշեցի

ինձ ծանոր տափաստանները: Սկսեցի շրջեւ առւմերն ու նոր կյանք գովերգել:

Ինչպես միշտ՝ յես միասին եյի իմ ժողովը ըրտի հետ և հասկանալի եյի նրան: Յես տեսա մի նոր յերկրի՝ Ղազախստանի ծնունդը, վորի մասին յերազում եյին ամբողջ սերունդներ և վորը յերգում եյին լավագույն ակինները:

Միայն 80-ամյա հասակիս կյանքը բաց արեց աչքերս և յես շատ բաներ հասկացաւ. վոր առաջ չեյի հասկանում: Կյանքը նորիք սկսեց իմձ համար և յես վերածնվեցի ու սկսեցի յերգել 25-ամյա յերիստասարդի նըման՝ ուժեղ, վերելքով, մեծ հրայրքով ացանկությամբ:

Իմ ուժերի այս վերածնումնը նշշկած մարդկության առաջնորդ Ստալինը վերադրեց իմձ, նա՛, վոր բոլոր ժողովուրդներին յերշանկություն տվեց: Տափաստաններում յես դարձա բոցաշում ազիտատոր, վորովինուն պրտիս խորքից եք բդյում:

Յես առաջինը դարձա կուտնտեսության անդամ:

Յես յեղա Մոսկվայում, վորն ավելի հրաշակի յե, քան հետիարային Գյուլիստանը:

Յես տեսա Ստալինին և վաղազուրվեցի Ստալինի հետ:

Խորհրդային իշխանությունն իմ յերգերի համար Կարմիր Դրաշի շքանշան պարզեց: Իմձ: Այդ ժամանակ յես ասացի և այժմ կրկնում եմ.

— Վոչ թե յես եմ պարզեատրված, այլ պարզեատրված և Ղազախստանի ժողովը դական պաեզիան:


Յես յերք եմ յերգում և կերգեմ, իմ շամսիրուս բարախում ե: Խորհրդային Միության բոլոր ակիններին, աշուղներին ու հաֆիզներին ասում եմ.

— Մեր սրտի լավագույն յերգերը տանք ժողովուրդների առաջնորդին՝ մեր ՍՏԱԼԻՆԻՆ:

Կեցցե՛ ՍՏԱԼԻՆԸ, մարդկային յերշանկության մեծ վարպետը:



ՅԵՐԱԿԵՐ



## ՎՈՂԶՈՒՅՆ ՔԵԶ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ճեկ տունդրայից, թավուտ անտառներից,  
Նովի յեղեքներից այն ալեկոծ,  
Հանքահորից, կապույտ ստեպներից  
Աւ լեռներից հաղած ամպե թիկնոց,

Քաղաքներից, ուր լույս ե և աղմուկ  
Յեվ նոր դշլազներից յերգերով լի—  
Մեր Գերագույն Խորհուրդն եք յեկել դուք,  
Արինական տերերը աշխարհի:

Քայլում եք դուք՝ մահուդ ու խաս հագաձ,  
Քայլում հրապարակի ձյուների մեջ,  
Յեվ ձեզ գիմալորում են սրտաբաց  
Դամբանը և Կրեմլի աստղերն անչեջ.

Դոմբրի դղրդոցով, յերգով սրտի  
Առղջույն ե ձեզ հղում Զամբուլը ձեր,  
Մունետիկներ՝ հզոր ժողովրդի,  
Առաքյալներ խնդուն ժողովրդի,  
Շնտրյալներ անմահ ժողովրդի,  
Յերկրի իմաստությունը կրողներ:

Բնտրել են ձեզ, խելքի, վորձի մարդկանց  
Տասըն և մեկ հանրապետություններ.  
Կրեմլի դահլիճներում ձեզ գրկաբաց  
Դիմավորում են նա, Ստալինը մեր—  
Մեծ առաջնորդը ժողովուրդների  
Յեվ առաջին պատգամավորն յերկրի:

Ստալինը կա— ճշմարտությունն ել կա,  
Ստալինը կա— ուրեմն ուժեղ ենք մենք,  
Ստալինը կա— ուրեմն կըշողա  
Դրոշը մեր յերկրի արևաներկ:

Տոն ե այսոր: Դեռ վաղ առավոտից  
Յերկիրն ուրախ յերգում ե, զըրժնդում:  
Դու սրբազն ես, Գերագույն Խորհուրդ  
Ժողովուրդների բախտն ե քո ձեռքում:

Զամբուլն ել ձեր սիրով թևավորված  
Զարկում ե լարերին դիշեր, ցերեկ.  
Առաքյալներ միլիոնների ընտրած,  
Յեղեք ժողովրդին անչեղ կապված,  
Ենրկի վստահությունն արդարացրեք:

3320  
33

## ՅԵՐԳ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՐԱԱՆ ՄԱՍԻՆ

Դե ձի թամբեցեք շուտ, յուրամն և իմ նեզ,  
Սահում և դաշտովը գարունը գունեղ...  
Սեփաչ աղջկերքը յերգում են այնտեղ,  
Նրբին փրփրում ե կումիսը համեղ:  
Ուրախ թոչունները նստել են բնին,  
Զիերը կանչում են իրենց քուռակին,  
Ճերմակ կարապները լողում են յերկնում,  
Կամնաչ տակիստաննը զմբուխու և փայլուն:  
Ծաղկող տափաստան դու, յերազ ես անդին,  
Վորտեղ ծաղիկներն են քարեր թանկադին,  
Կարմիր կակաչները րոցի ոկես ալվան՝  
Դաշտում րոցիլստում ե ամեն մի լալա:  
Փայլուն հակինթի ոկես վարդերն են վառվում,  
Ճերմակ շուշանները վիթթում են, բուրում:  
Գարնան զաշտերից ել սիրուն հրաշալի,  
Իմ պերճ հայրենիքն և ծաղկում սիրելի,  
Ռւը յերկրուները թվով տասնմեկ,  
Փարթամ այգիներ են, լուսե մի ցերեկ:  
Մեր ձայնը նման է շաչող ջրվեժին,  
Մեղ մոտ հրաշքներ կան, նման հեքիաթին,  
Վորքան հերոսներ կան հոկտ մեր յերկրում,  
Նրանց կրծքերին վառ նշան և փայլում:



Յեղ չի վախւցնում մեղ ամպրոպ, փոթորիկ,  
Մեղ միշտ հպատակ են ցամաք ու յերկինք,  
Զկա աշխարհում վողջ մեղ պես ժողովուրդ,  
Գլուե այդ մինչև իսկ վոստին արնաշուրթ:  
Մեր գարը լեցուն եր չաչող մարտերով,  
Փոխվեց ու դարձավ նա գարուն անվրդով:  
Մեր յերգը յեռում ե արյան պես մեր տաք  
Յեղ կյանքը ծաղկում ե փայլուն յերկնի տակ:  
Հրճիբ'ր ժողովուրդ իմ յերդիր բարձրաձայն,  
Մեղ հետ ե, մեր մեջ ե Ստալինը տիտան,  
Յեղ կոչը նրա մարտական և ահեղ,  
Յեղ կամքը նրա, և հանճարը զորեղ:



## ԼԵՒԼՈՎ ՍՏԱԼԻՆԻ ՃԱՌԸ

Զյունոտ Աւտառւն այն զուգել ե արե,  
Վերջին շողերի մեջ սուտակ ե վառել.  
Արծաթ են սստղերը... Այդում իմանորի  
Լավում են լուրերը ահա ուաղիոյի...  
Լոռում եմ լուրերը և հոնքս եմ կիսում,  
Նորից իմ ծեր սիրու հուզումն է պատում...  
Իսպանիա, Մանջուրիա, արյուն ու արյուն,  
Հարեցի հողում ել թափում ե ալյուն,  
Ու մեկ ել հեռու այն Կրեմլի պալատից,  
Հնչում ե ծափի հորդ ըրվեժ թնդալից...  
Վառլում ե իմ սիրու, սստղերն ըն զարթնում,  
Առաջնորդի ձայնն ե ահա ինձ հասնում:  
Էշխարհը հուզվել ե... Անդորր, լոռեթյուն,  
Յերկրին պատմական ու վեհ ժամ է տիրում:  
Ամբիոնը թնդում ե հզոր զողանջում՝  
Հանճար առաջնորդն ե ահա զեկուցում:  
Հանդում զազախները, վրացիքը սարում,  
Դաշտում բելուսուր, կոմին անտառում,  
Ամբողջ ժողովուրդը ականջ ե սրել,  
Ստալինի խոսքը ուզում ե լսել:  
Յեղ բոց կա ճառի մեջ, հզոր ե այնքան,



Յեկուժ կա, հավատ կա, սիրուն ե և այն,  
կոսքերը շատ ջերմ են, տաքուկ, հայրական ո  
Յեկ պարզ բյուրեղի պես, հստակ են այնքան ։  
Սահմանադրության վեհ խոսքերն են հնչում,  
Ամեն խոսք ե վոչ մի շողի չի զիջում,  
Վառ՝ քան արշալույսը, աստղից էլ լուսեղ,  
Ոգոստոս ամսի վառ մրգից էլ հյութեղ։  
Ինչպես մոռանամ այդ որը նոյնմբերյան  
Ինչպես չհնչի իմ յերդիս հետ գոմբրան.  
Արարի ժողովրդի հոր մոտն եմ թռչում,  
Մանկան պես ուրախ եմ, նրա պես հրճվում ։  
Մեծ հանձարների մեջ դու միշտ առաջին,  
Ժողովուրդներին դու որենք տվիր ջինջ,  
Սուում եմ տհա յես նրանց հետ կրկին,  
— Քեղնից չնորհակալ ենք ընկեր Ստալին ։



### ՅԵՐԳ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ

Ժնձ մոռ՝ մարգիկ յեկան պայծառ արշալույսին,  
Յեկ նվազիր անցյալն, աթա՛, ինձ ասացին։  
Յես ցնցեցի լարերն իմ գոմբրայի այն ժամ,  
Յեկ լսեցի քամու վաղըն ու գանդատ դաժան,  
Տեսա՝ նվազ ե նա արծաթի ձայն չունի,  
Տխուր ե այն յերդի նման մի թռչունի։  
Զի ուզում իմ գոմբրան քըրքըրել վերքերը հին,  
Կամ հնչել շղթայի ժանու զամանի մասին։  
Տայց վերքերն հինավուրց վասվում են ածխի պես,  
Յեկ յերդը թռչում ե արծվային խումբն ինչպես։  
Խուսաստանը բանտ եր, ժողովուրդը գերի,  
Շնչում եր այնակ նա՝ թույնը ծրդ-խավարի։  
Բւ թունոտ զնդանից, բանտերից այդ մոայլ,  
Չեր շողում վոչ արեվ, արշալույս, ցուլք մի այլ։  
Թագավորը—գաւհին՝ ազգերին այդ յեղբայր՝  
Լարում եր իրար զեմ՝ գազանի պես անբան։  
Յեկ զազախը ծեծված, և կիրզիզը անբախտ,  
Առեգին վրեժով՝ բարձրացնում սուր ու լախտ։  
Շնչելով մշուշն այդ թունալից, ալեկոծ՝  
Գնում եր դաշույնով՝ թուրքն այնժամ հողն հայոց։  
Ու վողբով, անհծքով, հառաչանքով լիքը՝  
Հոսում եր հրեյական կոտորածի ալիքը։



Թջնում եր ալիքը, բարձրանում, և նորից  
 Մխում՝ յեղայրական արյունը ջերմալից:  
 Բայց Լենին ու Ստալինը՝ զյուցագները յերկրի  
 Յեկան ու վառեցին արելն հոկտեմբերի:  
 Յեկ ստրուկներն յելան միլիոնավոր, անահ,  
 Ու շուռ տվին սվինը՝ թշնամու վրա:  
 Յեկ կամ արներն ընկան անարդանքի, մութի,  
 Հին ցարական մուսսիո այդ հեղձուցիչ բանտի:  
 Տասնամյակներ անցան հերթական, յերկու,  
 Ու անձանա՞չ դարձալ յերկիրը մեր բերքով.  
 Կառուցվեցին անթիվ գործարաններ, Փարբեկ,  
 Կանաչեցին դաշտերն՝ տալով անթիվ բարիք:  
 Միությունն ե շողում իր ամփերով հազար,  
 Ազատ են բելոսուսն ու հայը, դազախը,  
 Տաջիկն, Անդրկասպյան ժողովուրդը արի,  
 Յեկ այլ ցեղեր վաթսուն՝ վերած ընլած հիմի:  
 Նայում եմ յես հյուսիս— և փայլարից պայծառ  
 Լողում են բեկուում սասցաշերտեր մարմար:  
 Նայում եմ յես հարավ—արդիների լուրթ ծով,  
 Մրմարինին վերձիդ՝ որորլում ե նազով:  
 Նայում եմ հուզմունքով Ճեռալոր Արևելքին,  
 Ալիկիանոսյան ձամբեքի լայնարձակ կապոյրին:  
 Նայում եմ Արեկմուտաք, ուր հարազատ այնքան,  
 Սուտակների փայլով՝ շողոշողում ե Մոոկլան:  
 Յեկ ամենուր մեր մեծ անձայրածիր յերկրում—  
 Մարդկանց ուրախ, խնդուն բարեկամ եմ անսնում:  
 Ուր սուլում եր գնդակն ու զամշին եր շաշում,  
 Յեղայրական խոսքեր, ցնծություն եմ լուսմ:  
 Ուր ե թշնամանքը մոլորդած ցեղեքի,  
 Յեկ ուր ե չգրված որենքը սեկ դայլի:  
 Ուր ե շատաչյունը թուր ու նիզակի,  
 Յեկ արյունը թափվող՝ գետերով ահապին:  
 Ստալինյան արեկի տակ՝ ահո ընդմիշտ  
 Զքացան թշնամանքն ու կոկիծ, ամեն վիշտ:  
 Վորքան թույլ են, գունատ գեռ խոսքերը յերգչեր

Յեկ անուժ արձագանք՝ մեր լերկրի շառաչին:  
 Սեր առջեվն և ահա տասնըմեկ յերկլորյակ—  
 Ռուրախ ու յերջանիկ՝ մեր չքնաղ յերկնի տակ:  
 Սահմանագրությունն ե մայրը նրանց, հայրը—  
 Ստալինը հզոր. նա, վոր ամեն ո'ր ե  
 Գուրգուրում, աճեցնում և առաջնորդում մեզ:  
 Յեկ ժողովուրդների յեղայրությունը մեծ՝  
 Հաստատուն և հավետ, ինչպես յերգումն այն սուրբ  
 Մեծ Լենինի շիրմի վրա տրված՝ ամուր:  
 Հաստատուն և հավետ, ինչպես սառույցն Արկտիկի,  
 ինչպես փառքը պայծառ ու ջէրմ՝ Ստալինի,  
 ինչպես ժայռերն Ալա-Թառու լեռան բազմած,  
 Յեկ պարփսաները կուռ՝ կրեմլի վեհապանծ:  
 Ինչպես պողպատը նոր, հնչուն ու մարտենյան,  
 ինչպես ուժն ալեկոծ Արալի՝ վաղ գարնան:  
 Ցնծացե՛ք ժողովուրդ: Ցաղկեցե՛ք, յերգեցե՛ք:  
 Գրանիսից, մարմարից ալպարանք կառուցե՛ք:  
 Յեկ ցորեն ցանեցեք, տնկեցեք այգիներ,  
 Առած ջուր՝ խուժեցեք անապատն արելջեր,  
 Վոր ծառը խնձորից և՛ ծլի և՛ ծաղկի:  
 Ստալինի անունով ամեն ինչ կը հաղթեցինք:  
 Սեր կրծքից հնչում ե յերգը վեհ, սրբազն,  
 Յերգը կուռ խոսքերով, գույներով լուսազարդ,  
 հւր գեպի Առաջնորդ կա և՛ սեր, և՛ հարգանք,  
 Հիացմունք անսահման և անհուն զմայլանք:  
 Քսանամյակ, քո տոնին, քո բլգուն վերելքին՝  
 Ասում ենք մենք ուսիմե՛ք, սպասիքա՛ սրտագին:



## ՅԵՐԳ ԲԱԳՎԻ ՄԱՍԻՆ

Յես քեզ տեսել եմ վառ արշալույսին,  
Քաղաք սել նալթի և այգիների,  
Դեպի հարավ եր նախրապան քամին  
Քում հոտերը վազող ամպերի:

Յերբ քամին յերգեց, յես ել ձայն տվի  
Յերդ նվիրեցի Բագու քաղաքին.  
Վորի մասին յես շատ աշուղների  
Յերդերն եմ լսել իր ժամանակին:

Լարին խիեցի, յերգեցի հուզմած,  
Հեռու լեռներին ալիքն եր խիվում,  
Ճերմակ փրփուրով ափերին փարված,  
Այդ շաջող կապյան ծովն եր փոթորկվում:

Ալիքներ եյին այն կողմից դալիս,  
Բարձրանում եր ուր, իբրև բուրաստան,  
Միշտ ծաղկափթիթ զնովուն, խնդալի,  
Սիրված, հարազատ իմ Դաղախտան:

Քամու պես անցա յես վողջ Ռուսիայով,  
Թե կարողանամ ծովը յես անցնել,  
Հենց առավոտյան, վաղը ցերեկով,  
Ղազախստանում կարող եմ լինել:

Յես բերել եմ քեզ մեր հեքիաթների,  
Հարստությունը՝ դանձն ստեպաների...  
Վեշկայի քաղաք, նավթով դու բերրի,  
Մարդարիուս սեվ—մեր ծաղկող յերկրի:

Յես բատիրների յերկրվիցն եմ յեկել,  
Յեկ կոլխոզների աշխարհից հարուստ  
Տեսնել հողը այն, վորտեղից ճնշել,  
Կիրովն եր քչել թշնամուն անկուշտ:

Կիրով, դու ընդմիշտ կմհաս անմահ  
Մեր ամբողջ յերկրի ու մեր սրտերում...  
Աշխատում ենք մենք, կառուցում անահ,  
Մենք արթուն պահակ, կանգնած սահմանում:

Մենք կարիճներին այրեցինք բոցով,  
Յեկ վոչնչացրինք թշնամուն ստոր,  
Որը, յերբ ընկար գնդակից խոցող,  
Թշնամու համար յեղավ վերջին որ:

Մենք վոչնչացրինք մարդասպաններին,  
Ել ներում չկա զաղիր թշնամուն.  
Մեր առաջ բացվեց հեռուն խնդալին,  
Մեկ հետ և ահա  
Ստալինն անդին,  
Վոր դեպի պայքար քեզ տարավ Բագու:



## ԴՅՈՒՑԱՉՆ ԿԼԻՄԸ

Քո կեռ թրից, նենդ Զինդիդ-խան,  
Թանձը գետ եր հոսում արյան,  
Յեկ ուր վոր քո վոտն եր կոխում,  
Զորանում եր դաշտը ծաղկուն:  
Ուր անցնում եր քո հոծ հորդան,  
Մարդ լողում եր գետում արյան:  
Դու գիշատիչ դահիճ, վիրան,  
Այս եր փառքը, նենդ Զինդիդ-խան:  
Դու գիտեյիր այրել, ջարդել,  
Մեր կլիմը քեզ չի նմանվել.  
Կլիմի փառքն են այսոր յերգում  
Բազեները կապույտ յերկնում:  
Վոչ թե լացի, արյան գետեր,  
Այլ մեզ բախտ ե կլիմը բերել.  
Ժողովուրդն ե այդ ըզգացել,  
Նրան Ստալինի ընկեր դարձրեց,  
Գովիր աշուղ, կլիմին հոկա,  
Նրա ուժը յերազ չի, կա.  
Կովի մեջ ե առյուծ հղոր,  
Նա վախ չունի, կովին սովոր:  
Ահեղ ժամին պատերազմի,  
Նա թշնամուն շինեց փոշի,

Ժողովուրդն ե ասում, — հոկա,  
Մեծ Ստալինի ընկերն ե նա:  
Յես դարերի խորքն եմ նայում,  
Մեծ մարդիկ եմ այնտեղ տեսնում,  
Խոկանդարն ե այնտեղ հայտնի,  
Յես սեսնում եմ և Ռուստեմին.  
Կիրդիզներին Մանասն ե մոտ,  
Կենե-խանը մեզ ե ծանոթ:  
Արյան ճամբին պատերազմի՝  
Վալքը ճերմակ նժույդների,  
Զորավարներ առաջնորդող,  
Յեկ գրոշներ վեր ծածանորդ:  
Բայց յերկար չեր փառքը նրանց,  
Կարճատեկ եր, ու չմնաց...  
Թե փառավոր մեկը լիներ,  
Ուրիշ կովում նա կջարդվեր,  
Ու դաշտերում արնաթաթախ,  
Նրա դին եր մնում հաճախ:  
Միայն դու յես, կլիմ սիրելի,  
Վոր հզոր ես, անսպարտելի,  
Հաղթանակի ճամբով քայլում,  
Յեկ վոչ մի տեղ դու չես պարտվում:  
Ժողովուրդն ե քեզ շատ սիրում,  
Դրա համար ես միշտ հաղթում:  
Քեզ լենին ե կովի կանչել,  
Յեկ Ստալինն ե սովորեցրել:  
Դու կովիցիր կովի ժամին,  
Հաղասարը չկա ուժիկ:  
Յես ընծա յեմ քեզ պատրաստում,  
Մի քուռակ եմ յես աճեցնում.  
Բարակավոտ, փոքրիկ ձիուն,  
Խնամում եմ վոնց իմ փորդուս:  
Դարնան դեմը կմեծանա,  
Մաղր մաքուր, նուրբ կըդառնա:  
Նա կուտանա աշխուժ կուլան,

Կուրախանա կաղախսոսան,  
Յել կաղմկեն մեր վողջ յերկրում,  
Ու կովկեն հրաշք—ձիուն.  
Իսկ մայիսին ջերմ, բուրավետ,  
Կթոչկոտա ուրախ, վետ-վետ,  
Գետով, սարով նա կըթոչի,  
Մեծ ճամբեքին չի յել հոգնի:  
Յես կլիմին ստորանման  
Այս թանկադին ընծան կտամ.  
Վոսկի բաշով, վրան պերճ սանձ,  
Իմ Տուլպարը արագընթաց:

### ՍՏԱԼԻՆՑԱՆ ԴՅՈՒՑԱԶՆԵՐ

Ստալինից, մեր արև, սրտիս շողեր են հոսում,  
Յել ճշմարիտ իմ լեզուն ժողովրդին իմ բանբեր,  
Խոսքերը իմ յերգերի յես մեծ սիրով եմ հյուսում,  
Յերգերիս մեջ գովում եմ Ստալինին անվեհեր:  
Գաղափարի աղբյուր ես և վճիռ ես ու մաքուր,  
Յերջանկությունը յերկրի բերողն ես դու, Ստալին,  
Դու գգվում ես հոգասար ժողովրդին ամենուր,  
Ժողովուրդներ միացնող սիրով հայր ես, Ստալին.  
Ակեղքն ես դու յերգերի, իրերի, բոց տողերի,  
Վոդեչնչան յերգերի ակունքն ես, մեծ Ստալին:  
Դու մի ջրվեժ ես շաչող՝ հզոր հաղթանակների,  
Ժայռեր փշրող ու արգելք չիմացող դու, Ստալին:  
Դու կըակոտ մի ուժ ես, քո գեմ յերկինք ու գետին,  
Խոնարհվել են ահա աես: Հոյակասղ ուժ, Ստալին,  
Ժողովուրդը տեսնում է, ծաղկել են դաշտն ու այդին,  
Հնչյուններում դոմբրայի քո անունն է, Ստալին:  
Նա աշխարհի հանճարն է, մեր բոլորի սիրելին,  
Նա չլիներ՝ կմթներ լազուր կապույտը յերկնի:  
Արարից ել նա յայն է, կրանք ե տալիս բերկրայի,  
Բոլոր ժողովուրդներին ազատ, ուրախ յերջանիկ:  
Վորովես արևն ամառվա մեր նոր որենքն ե վայլում,  
Վոր դրված է հոկայի հաստատ ձեռքով իմաստուն,

Որենք, վորին շատ վաղուց լուսըն ելին յիրադում,  
 Վորը արագ քայլերով մեզ դադաթներ և տանում:  
 Միլիոններն են պարզում այն, իրոք դրու հաղթական,  
 Հոյակապ ու խմասուն այդ որենքը մեր յերկրի,  
 Յերգում են ծեր ու ջահել և հրճվում են բարձրաձայն,  
 Մանկական զիլ ծիծաղն և հնչում ահա բերկրալի.  
 Յեվ քաղաքներ են անում, և ծաղկիներ են ծաղկում,  
 Ծփում, խչչում են հասկեր դաշտերի մեջ ծավալվող,  
 Կատարվեց՝ ինչ գարերով վաղուց եյինք յերազում,  
 Դատարվեց՝ մեր վաղեմի վառ քերազը վոսկեցող:  
 Յեկալ Ալմա-Աթայից սուրհանդակը սրբնթաց,  
 Յեվ ընտրության համբավը հասավ ամեն մի առւլ,  
 Ինձ թվաց յես ջահել եմ, և տարիքս պակասած,  
 Ջահելությունը դարձավ, ջահելացար դու Ջամբուլ.  
 Ժոռացա, վոր յես ծեր եմ ու ճերմակած ինչպես ձյուն,  
 Յես յերգում եմ բոլորը թող լսեն ինձ աշխարհում:  
 Թող առաջինը մեզնից մտնի Խորհուրդ Գերազույն,  
 Նա, վոր աղու և անմար, վոր վառվում և ու փայլում,  
 Մեծ հանձարը իմաստուն, հսկա հաղթանակների,  
 Նա, Ստալինն հարազատ մեր սիրելին անդադրում.  
 Այդպես եմ յես ասում Ձեղ, և բոլորն են այդ կրկնում,  
 Դոմբրաս յերգում ե ահա, զրնդում լայն դաշտերում,  
 Յեղայրությունը մեր սուրբ փոքր և մեծ ազգերի,  
 Ինձ հետ և միշտ անբաժան, յերգում և նոր ու հրճվում:  
 Յեվ յես դյուցաղներին եմ այսոր առաջադբում,  
 Վոր ամուր են ալմաստից, սուր՝ քան աղոզպատը վայլուն,  
 Վոր մեզ դեպի յերջանիկ կյանք են տարել աշխարհում,  
 Յեվ ում կրթել ե ինքը Ստալինն անդադրում:  
 Դալինին և Մոլոտովը ահա իմ թւկնածուներ,  
 Հերոս Կադանովիչ Քեզ ահա իմ ձայնն եմ տալիս,  
 Յատերին եմ ձայն տալիս սրանց նման արժանի,  
 Անք Գերազույն Խորհրդի դոները լայն ենք բացել  
 Ճեվ լավերից լավերին, ով պարծանքն է մեր յերկրի,

Յվ կարող ե իմաստուն Ստալինի հետ քայլել.  
 Այդպես եմ յես ասում Ձեղ, և բոլորն են այդ կրկնում  
 Յեվ առւլում դաշտերում ամբողջ յերկրում մեր ազատ.  
 Հայրենիք իմ դու ծաղկեր, դարձիր վոսկու պես վայլուն,  
 Լան հսկեցեք, արծիվներ, դուք ստհմանին հարազատ:  
 Յերջանկության և լույսի արեին ենք ձայն տալի,  
 Յեղայրության ազգերի և սրին մեր շողջողուն:  
 Բող Գերազույն Խորհրդում առաջինը նա մտնի,  
 Ստալինը հարազատ արեգակի պես վայլուն:



## ՍՈՒԼԵՅՄԱՆ ՍՏԱԼՍԿՈՒՆ

Աշուղ Սուլեյման,  
Դու Դաղստանի բլրուլ քաղցրաձայն,  
Թայլայլիր անուշ յերգդ յերջանիկ արևածագին,  
Մաստխուղների այն խոռու խալար որերը անցան,  
Անցան որերը դագանաբարու, չեն դալու կրկին:  
Նայիր, թե ինչպես  
Հին Կուրգաններին կակաչն ե աճում,  
Մեր յերգի ձայնով լցված ե հիմա աշխարհը արար,  
Սովետստանի մեծության մասին մեր զովքն ե հնչում,—  
Գովք՝ յերգիչների վոսկե աշխարհին այս յերջանկարար:  
Ամեն տեղ հիմա բլրուլի անուշ տաղեր են ուզում,  
Վոչ թե վանդակում, այլ թառած բարդու ճյուղերին կանաչ,  
Քո Դաղստանի, Դաղստանի լեռ ու պարտեզում:  
Յերգում են նրանք, որեց-որ դառնում ուրախ, անձանաչ:  
Շողերն արևի ամպ ու մասուախուզ անդարձ ցրեցին,  
Շողում ե հիմա մեր զլխալերե յերկինքը փիրուղ,  
Կերին-Ստալինն այդ տիտանները մեծ ու յերկրածին  
Բոլոր աղջերին յերջանկության մեծ Ութենք բերեցին,  
Հողին առաս բերք, խոկ բլրուլներին ձայներ տվեցին:  
Հայրենիքի դեմ խամբում և ծաղիկն ել Գյուլստանի,  
Յեկ ծերությունը նրա հանդիման կորչում ե անհետ.  
Հրաշը չե արդյոք, վոր ճերմակելով, բայց տարեց-տարի—

Անուշ են յերգում ծերուկ Զամբուլը Սուլեյմանի հետ:  
Արծիվների պես մեր յերգերն են միշտ ճախրում աշխարհում,  
Սուրում են դեպի այն արծիվների Արծիվը հպարտ,—  
Ռւմ միաքն ե անչափ, ինչպես ովկիանի խորությունն անհուն,  
Ռւմ ուժն ե յեռում և ինչպես մըրիկ ահեղ ե, անապարտ,  
Ռւմ կամքի դիմաց անզոր կթվան լեռներն ահոելի,  
Ռւմ անունն ե միշտ զրնդում, ինչպես լեզենդ դարերի:  
Յեկ յերգում են մեր ստալինյան յերկրում ճախրում  
թեկաբաց—  
Մեր սրտի զարկն ու մտքի կրակը իրենց մեջ սրահած:  
Սուլեյմանի հետ մենք յերգ ենք ասում պարզսիրու ու  
ազատ,—  
«Մեր մեծ Ստալին»—հնչում ե յերգում անունն հարազատ,—  
Աշխարհն ե փթթում ավելի փարթամ, քան վարդ ու կակաչ,  
Յեկ յերգն ե հորդում ահա ինքնաբուղիս ու քաղցրակակաչ:



## ՄԵՌԱՎ ՄԵԾ ՄԱՐԴԸ\*)

Յերդիր գու, վըշտով ու ցավով քո, Զամբուլ,  
Յերդիր գու, աշնան գետերից ել տիսուր:  
Առողում և այդ լուրն առոլից մինչ առուլ—  
Եր Գորկին—մեծ մարդն և մեռել՝ Մոսկվայում:

Այդ մըրըրկահազն և թեսերն իր ծալել,  
Հպարտ այն բաղեն և ընկել ժայռերեն:  
Յերդով և յերկին մեր նա միշտ ծառայել,  
Դեպի ճշմարիտն և կոչել հայրենիք:

Յեկավ նա, յերբ մութին եր մեզ մոտ ծավալվում,  
Տւ յերբ լուսաբացը դեռ շատ եր հեռու,  
Յերբ դեռ՝ մեր յերկիրը— բանտի՛ սես լուս,  
Ապրում եր նզովք անցյալի՛ խավարում:

Բայց այդ խավարում նա յերդերն իր վառում,  
Վորպես համաստղերը մթին կամարում:  
Յերկրով հոսեցին այդ յերդերը մաքուր:  
Նրանք արտերի՛ մեջ վառում ելին հուր:

Դեռ Լե՛նինը— կոչել ե նրան բարեկամ,  
Նըրա դրվածքները համարել ե թանկ,  
Ատալինը կարդացե՛լ ե գրքերը նրա,  
Սիրե՛լ ե— վորպես մտերմին հարազատ:

Այդ նա՛ բերեց յերգը մեր մե՛ծ պայքարի,  
Պայծառ խոսքերի թանկարժեք մարդարիտ:  
Իրենց սապատներն այդ յերդով շտկեցին  
Էնթիվ ըստրուկները՝ ճնշված կարիքից:

Նըրա յերդերում արշալույսը հըզոր  
Գալի՛քն եր բացվում՝ սքանչելի իր լուսով:  
Ամբողջ ժողովուրդն եր յերդով նրա մեծ  
Գընում խավարիցը դեպի՛ այդաբաց:

Լողում եր յերկրով մեր անուշ մի գարուն,  
Վոր թարմ, ցողապատ ծաղկանցով եր հարուստ:  
Նըրա ծերությունը պայծառ եր, շքեղ,  
Նա վե՛հ, սքանչելի՛ յեր— մեր մեծ յերկրի պես:

Փայլեց, փրփրեց նա, զնդաց ու անցալ՝  
Վորպես մի աղբյուր— վոր մաքուր ե, պայծառ:  
Յեկ մեր— ամենից յերջանիկ մեր—յերկրում  
Մեռավ ամենից յերջանիկ մի ծերուկ:

Լացեք դուք, լարեր իմ տիսուր դոմբրայի.  
Մեռել ե մարտիկը արդար պայքարի:  
Այդ նա յե մեռել, ում— Լե՛նինն եր սիրում:  
Ում մե՛ծ հանձարեղ մեր Ստա՛լինն եր սիրում:



\*) Զամբուլն այս յերդը յերդել ե Մ. Գորկու մահվան լուրը Պատահասանում ստացվելու որը:



## ԱՐԵՎԱՅԻՆ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

Ու լարերին զարկեց Զամբուլն իր մատներով  
Աշանդական յերգն և հսոսում առւներով:  
Մեր Հանդաշատ, ճառագայթով ցողված յերկրում,  
Արելային Գորկու մասին յերգ ևմ դրում:  
Վառիր իմ յերգ խարույկն ինչպես բարձրում լեռան,  
Ծաղկիր, զմբուխտ հովիտների նշի նման:  
Համայն յերկրի ժողովրդի յերգերի խորքը թափանցիր,  
Վորպես հոսանքը գետերի ովկիանի մեջ անծայրածիր:  
Բնդդրկել են յերկիրն ամրող ճառագայթով իրենց պայծառ,  
Լենինը և Ստալինը արեալառ յերկու հանձար,  
Վոր մեզ համար կյանքը դարձրին մի անթառամ մայիս պայծառ:  
Խմաստությունն և նրանց շողում, վոնց Ալթայը զմբուխտավառ:  
Դյուցազներ վեհ մտքերի, ամենազոր մեծ ու տիտան,  
Անափ ու լայն ովկիանների անծայրածիր կապույտն և քան:  
Դու մեծ Գորկի, թափանցեցիր խորության մեջ նրանց անհուն,  
Յեկ ամեն մի ժողովրդի հասավ լեզուն քո խմաստուն:  
Յեկ սկսեց մարգարերար խոսքը քո սիրարժան,  
Ժողովրդի սրտին շատ ջերմ, թշնամու դեմ խիստ ու դաժան:  
Դու քո սրտով մաքուր եյիր, քան թե ձյունն եր լայն դաշտերի,  
Քան բյուրեղը պայծառափայլ, կարապների ջինջ լճերի,  
Ժողովրդի սիրո համար սրտիր խորքում, ով մեծ պոետ,  
Պահել եյիր յերգը դու, մեղրից անուշ և բուրավետ:

Կուտակեցիր դու դարերի իմաստությունը անհամար,  
Ժողովրդին ընծայեցիր քո խոսքերը մարդարաւաշար:  
Թի արևի արի զավակ, պտեաներից հզոր պոետ,  
Քո խոսքերովը հատընտիր, քո խոսքերովը դունավետ,  
Հորինեցիր պոեմներ դու, ժողովրդին քո հարազատ:  
Նվիրեցիր դու վառ սիրադ, ժողովրդին դու քո ազատ,  
Քո արևային սիրտը սովոր դու մարտերի ու պայքարի,  
Քո անսահման մեծ ու հզոր, հերոսական սիրտը արի:  
Դու ծովն անհուն, ազատ դաշտերն եյիր սիրում,  
Ստրկության շղթան փշրող ժողովրդին եյիր սիրում,  
Դու լենինյան դյուցազնական հերոսներին եյիր սիրում,  
Դու աշխարհի մեծ հանձարեղ Ստալինին եյիր սիրում:  
Դեռ կապրեյիր մեզ հետ մեկտեղ, դու տարիներ քանիքանի,  
Թե չխայթիր խայթիչը քեզ, ոճ ու կարիճ Յագողայի,  
Թե վոր թույնը չվարակեր քեզ մարդասպան դահիճների,  
Վոր քեզ այցի եյին գալիս զգեստներով բժիշկների:  
Հողը լիզող սողունների և այլանդակ հրեշների,  
Իրենց ծախած տականքների, Փաշիստական պիոդ չների,  
Ո՛, ինչպիսի դեռ չլաված չաք ու ստոր, նենդ արարքներ,  
Ո՛, ինչպիսի դեռ չծնված դիմակավոր գարշելիներ:  
Լույսի նման սպարզ եր նրանց, բանդիտների այդ վոհմակին,  
Վոր յերբեք չես դավաճանի, քո սիրելի ժողովրդին:  
Վախում եյին նրանք քեզնից, ինչպես բոցից ու կրակից,  
Ինչպես բուն և միշտ վախենում, պայծառափայլ արեգակից:  
Նրանք համայն ժողովրդի առաջնորդին եյին դավում,  
Ժողովրդի զորավարներ եյին նրանք թունավորում,  
Ծախում եյին ժողովրդին, ծախում եյին յերկերը մեր,  
Ու պատրաստում գաղտնագողի, արյունահեղ արշավանքներ:  
Ու ձնչում եր նրանց ահը, գաղտնիքն իրենց դու կմբոնես,  
Ու քո ձայնը յերկրե յերկիր, կվոլուտար փոթորկի պիս:  
Յեկ դու ընկար դիրքիդ վրա, վորպես մարտիկ մի անվեհեր,  
Վորպես յերգիչ իր յերգերով կովի հանող ահեղ զնդեր:  
Վրիսկեցին իրենց գործում սողունները այդ ոճածին:  
Այդ բթամիտ չարագործներն իրենց հաշվում սխալվեցին:  
Չի ջնջի քեզ յերբեք, յերբեք ժողովուրդն իր սրտի խորքից,

Դեպի գալիք դարերը քեզ, նա կտանի, ով մեծ Գորկի:  
Մարդկանց հույզերը դրդող, ջերմ ուսուցիչ ինչպես արև,  
Ժողովրդական սրբազն պայքարների դու մարդարե,  
Ով մեծ Գորկի, դու անման և սիրելի, և հարազատ,  
Վորաբես արև պայծառափայլ, վառվում ես մեր յերկրում ազատ:  
Յեզ դեռ կապրես սրտերի մեջ մեր յերշանիկ սերունդների,  
Յերկրի վրա կենդանություն և մարդկային շունչ կա քանի:  
Դարերի մեջ հայերժ անմահ, ով մեծ Գորկի արելազուն,  
Քեզ կհեշի յերշանկավետ սերունդների չքնաղ լեզուն:



### ՅԵՐԳ ԱՐՏԻ ԽՈՐՔԻՑ

Նայիր սարերի դադայներին,  
Նայիր կանաչին ստեղների,  
Տես արշալույսի կրակը վառ,  
Յեզ արոտները մեր անհամար:  
Հանդերում ահա, ծայրից մինչ ծայր,  
Վոչսարի հոտեր, բազմահազար,  
Իրենց հետքերն են այնտեղ թողնում,  
Դեպի Կարակալ են ուղտեր գնում:  
Դեպի Զեքմեն են ուղտեր գնում,  
Զարակենդից մինչև Կըլ-Ռոդան,  
Բոնել են ուղտեր կոլխոզական:  
Իսկ արոտներում մեր անքանակ,  
Մտեպի ձիերի շատ յերամակ:  
Յեզ արծվի պես իմ յերդն ե թոչում,  
Առաջ ե թոչում ու դիլ կանչում:  
Արելելք, հարավ-ամենուր հող,  
Արելմուտք, հյուսիս-ամենուր հող,  
Բոլորը իմն են, համայնական  
Յես հարյուրամյա ժիրշի յեմ, ծեր,  
Ելնաղար կոլխոզն եմ սիրում մեր,  
Չիենն եմ սիրում, նաև Այակ,  
Ուր յերջանիկ ե ամեն դագախ:



Յեվ նրանց վրա, նոր տարվա պես,  
Որն է լուսանում արևերես:  
Ո՞վ բերեց այդ բախտը մեզ համար  
Զաիլյան սարերը ձյունափառ:  
Յես հարյուրամյա Զամարուլ ժիրչիս,  
Հոգուս վողջ ուժով ձայն եմ տալիս—  
Ղազախի համար կոլխոզներում  
Ստալինը բերեց յերջանկություն:  
Այդ անունը վորսքես արեի լույս,  
Ստալին-Լեռնային վառ արշալույս,  
Ստալին-նման լեռան արծվի  
Բերեց մեզ համար բախտ արեի:  
Նա— բարեկամը հզոր, արի,  
Յերջանկությունն այդ իր ձեռներից  
Մենք վերցրինք ահա: Յես թեև ծեր,  
Ելնազար կոլխոզն եմ սիրում մեր:  
Չիենն եմ սիրում, նաև Այակ,  
Ուր հասկացել ե ամեն դադախ,  
Ուր նրանց վրա, նոր տարվա պես  
Որն է լուսանում արևերես:  
Յերգում ե յերզն այս ծերուկ ժիրչին  
Դրած նրա մեջ վողջ իր հոգին:

### ՅԵՐԳ ԾԱՂԿՈՂ ԾԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Զրվեժի յե յերգս նման,  
Սրտիս խորքիցն է թափվում,  
Յերգով հարուստ եմ անսահման,  
Ծերությունս է ինձ ժպտում:

Ո՞վ ծերություն ... քեզ հազիվ թե  
Գալիք մահը նեղացնի.  
Հեռվում սարեր կան արծաթե...  
Ստեան եմ տեսնում Զարկենտի:

Կարակալում յես տեսնում եմ  
Թոչող պողպատ արծիվներ,  
Սարն է դողում, յերբ անցնում են,  
Դեղի կաստել արակտորներ:

Բարձրացնում է փոշի թեթեվ  
Կոլխոզական մեքենան,  
Ո՞վ ծերություն... քեզ հազիվ թե  
Վախեցընի մի ժանտ մահ:

Յես տեսնում եմ հեռուն լուսե,  
Ծաղկով ստեպն եմ տեսնում,

Ալմա-Աթա քո լեռ ուսին  
Մեծ այդիներ են ծաղկում:

Տուրգեն գետի լայն հովիտում  
Ծաղկող թութունն ե ձգվել,  
Յեղ վարդաղույն յերազ դաշտում  
Փափուկ բամբակն ե ծաղկել:

Ու չնչում ե խոտը—սողուն  
Թանձր բույրով վարդերի,  
Յեղ լմ գլուխն ե պտտվում,  
Յեղ վառ ծաղկի յե նմանվում  
Բույրը ասված խոսքերի:

Ո ծերություն... քեզ հազիվ թէ  
Գալիք մահը նեղացնի,  
Հեռուները լույս արծաթէ  
Գիտեմ, յերբեք չեն մթնի:

Այս աշխարհում լավ ե ապրել,  
Յերգել, ման գալ դոմբրայով,  
Ու մեր յերկրի վերեղ տեսնել,  
Շող արևը՝ լույսի ծով:

Անցա սարով, ստեղներով,  
Մեր յերջանիկ մարդկության,  
Մարդիկ տեսա անբավ ուժով,  
Պատրաստ կովի, անսասան:

Յեղ յես ձայնս բարձրացնելով,  
Գոռում, գոչում եմ, ե՛... հե՛յ...  
Բարան, Ատա և ջիղիտներ,  
Դուք Զամբուլին ասացեք,  
Թե քայլվածքը իր անվրդով  
Վորտեղից ե վերցրել այսոր,

Կեցվածքն իր քաջ մի կեղեց:  
Յես ստացա մի պատասխան—  
Աղալույսից արեգական.

Յես ստացա մի պատասխան—  
Ամառներից բերքով ծփան,  
Յես ստացա մի պատասխան—  
Անմար լույսից, Ստալինյան:

Յես մոռացած հոգնածություն,  
Սարի կատար բարձրացած,  
Ծերությունս եմ յերգում, որհնում,  
Պայծառությամբ զարդարված:





## ՈՐՈՌՈՅԻ ՅԵՐԳԸ

Յես կուզեմ դու քնես, իմ փոքրիկ  
Կհնչի Զամբուլի հին դոմբրեն.  
Ալմերին նա տալիս ե, խփում,  
Պապիկի իր ձեռքովը բարի,  
Որորոցդ ե նա քո որորում,  
Կամացուկ յերգելով, մրմռում,  
Վոր իր յերգը հանդիսու քեզ բերի:

Տես, կապույտ շող աստղիկն ե ննջել,  
Հոտերն են յայլայում քուն մտել,  
Աղլամազ ուլիկներն են քնած,  
Ռւզտերն են քուն մտել լոյն ստեպում,  
Յել վոսկի քուռակներն են քնած,  
Նբարբուրդ գառնուկներն են քնած,  
Դե քնիր, իմ փոքրիկ, իմ սիրուն:

Խոտերում քուն մտան ծղրիւներ,  
Իսկ Ամու-Դարիայում ձկնիկներ,  
Լոռության անթափանց ունկնդիր,  
Գետափին քուն մտան յեղեղներ,  
Յեվ ծաղկունք, և լճեր, և գետին,  
Դու ինչո՞ւ չես ննջում, իմ անդին,  
Սեվաչյա իմ փոքրիկ գանդրահեր:

Դե քնիր, իմ փոքրիկ թուխ դադախ,  
Դու վորձված ձեռներումն ես ազատ.  
Կրեմլից Ստալինն ե նայում  
Յերկիրն ե իր դիմաց անսահման.  
Նա քեզ միշտ ե տեսնում, իմ մանկիկ,  
Յեվ նա քեզ սիրում ե, իմ փոքրիկ,  
